ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2021-2023թթ. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ (հունվար-նոյեմբեր)





2023թ. հունվար-նոյեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 2 տրլն 43.3 մլրդ դրամ, ինչը 82.8 մլրդ դրամով կամ 4.2 %-ով ավել է 2022թ. և 1087.1 մլրդ դրամով կամ 113.7 %-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-հոկտեմբերի ցուցանիշից ավել է 288,4 մլրդ դրամով կամ 16.4%-ով: 2023թ. հունվար-նոյեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց կողմից արտերկիր է փոխանցվել 1459 մլրդ դրամ, ինչը 469.2 մլրդ դրամով կամ 47.4 %-ով ավել է 2022թ. և 908.2 մլրդ դրամով կամ 164.9 %-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-հոկտեմբերի ցուցանիշից ավել է 585.7 մլրդ դրամով կամ 67.1%-ով: 2023թ. հունվար-նոյեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 584.4 մլրդ դրամ,ինչը 386,3 մլրդ դրամով կամ 39.8%-ով պակաս է 2022թ. և 179 մլրդ դրամով կամ 44.2 %-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-հոկտեմբերի ցուցանիշից պակաս է 297.2 մլրդ դրամով կամ 33.7%-ով:

2023թ. հունվար-նոյեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 5 մլրդ 219.3 մլն դոլար, ինչը 619.8 մլն դոլարով կամ 13.5 %-ով ավել է 2022թ. և 3 մլրդ 320.8 մլն դոլարով կամ 174,9 % -ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-հոկտեմբերի ցուցանիշից ավել է 1 մլրդ 139.7 մլն դոլարով կամ 27.9%-ով: 2023թ. հունվար-նոյեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց կողմից արտերկիր է փոխանցվել 3 մլրդ 723.9 մլն դոլար, ինչը 1 մլրդ 406.2 մլն դոլարով կամ 60.7 %-ով ավել է 2022թ. և 2 մլրդ 631.4 մլն դոլարով կամ 240.9%-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-հոկտեմբերի ցուցանիշից ավել է 1 մլրդ 700.7 մլն դոլարով կամ 84.1%-ով: 2023թ. հունվար-նոյեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 1 մլրդ 495,4 մլն դոլար, ինչը 786.4 մլն դոլարով կամ 34.5 %-ով պակաս է 2022թ. և 689.4 մլն դոլարով կամ 85.5 %-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-հոկտեմբերի ցուցանիշից պակաս է 561.1 մլն դոլարով կամ 27.3%-ով:

*** Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի արտաքին հատվածի վիճակագրության հրապարակումները՝ ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ**